Տ. ՄԵԲԵՈՍ ՔԱՀԱՆԱ ՂԱԼԱՉՅԱՆ

(ավազանի անունը՝ Մանուկ)

Ծնվել է 1976 թ. օգոստոսի 8-ին Երևանում:

1982-1992 թթ. սովորել է մայրաքաղաքի Ս. Սպանդարյանի անվան թիվ 24 միջնակարգ դպրոցում:

1992-1995 թթ. սովորել է Երուսաղեմի հայոց Պատրիարքարանի Ժառանգավորաց վարժարանում:

1995-1996 թթ. սովորել է Երուսաղեմի հայոց Պատրիարքարանի Ընծայարանում:

1996-1998 թթ. ուսանել և ավարտել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանը:

1998 թ. աշխատանքի է նշանակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ՔԴՔԿ-ում:

1998 թ. սեպտեմբերի 20-ին, ձեռամբ Սյունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1998-2000 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում որպես հոգևոր սպասավոր:

2000-2001 թթ. ծառայել է ՀՀ ՊՆ-ում որպես ՀՀ ԶՈՒ Հոգևոր Ծառայության առաջնորդի օգնական:

2002-2003 թթ. ծառայել է Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում:

2002-2005 թթ. եղել է Հայ Առաքելական Եկեղեցու Երիտասարդական Ուխտագնացությունների Կենտրոնի տնօրեն:

2005 թ. սեպտեմբերին պաշտպանել է ավարտաճառ՝ «Ս. Հովհան Որոտնեցու «Մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պօղոսի» գործի ուսումնասիրությունն ու բնագիրը» թեմայով:

2005 թ. սեպտեմբերի 11-ին՝ Ս. Խաչվերացի տոնին, ձեռամբ Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի երկու զավակ: